

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ
լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»
ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

_____ 2017 թվականի N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
22-Ի N 437-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <հրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 2016 թվականի մարտի 1-ի N ՆՀ-213-Ն հրամանագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի <Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին> N 437-Ն որոշման 1-ին կետի՝

1. 1-ին ենթակետում <օգտակար հանածոյի արդյունահանման> բառերից հետո ավելացնել <և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման> բառերը:
2. 1-ին ենթակետով հաստատված՝ հավելված 1-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.
 - պայմանագրի վերնագրում <օգտակար հանածոների արդյունահանման> բառերից հետո լրացնել <և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման> բառերը,
 - պայմանագրի նախաբանում <հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի> բառերից հետո ավելացնել <և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների> բառերը,
 - 1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Պայմանագիրը

Նախատեսում է հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը կամ հանքային ջրի աղբյուրը կամ հորատանցքը և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների շահագործման տրամադրելու պայմանները և ժամկետները, լեռնահատկացման կոորդինատները, կամ հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի կոորդինատները և սանիտարական գոտու սահմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, բնապահպանական, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման) վճարման վերաբերյալ դրույթներ, բնապահպանական կառավարման պլանը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման պլանները, ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կառավարման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական երաշխիքների ներկայացման, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության), համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես նաև նրանց փոփոխարարությունները կարգավորող այլ պայմաններ:»:

- 2 կետում թվերից հետո ավելացնել <4 և 5> թվերը,
- 1 կետում <պայմանագրի N 4 հավելվածով` բնապահպանական կառավարման պլանը,> բառերից հետո ավելացնել բառերը,
- 2 կետում <կամ հանքավայրի տեղամասը> բառերից հետո ավելացնել < և (կամ) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտները> բառերը,
- 4 կետում ավելացնել նոր 3.4.27 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.
- 7-րդ կետում <տեխնիկատնտեսական,> բառից հետո ավելացնել <ընդերքօգտագործման թափոնների վերամշակման> բառերը,
- 11-րդ կետի 3 ենթակետում վերջին պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

<հավելված N 5 ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ _____ էջից:»:

3.2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածի 4-րդ կետի 4.4 ենթակետում ավելացնել նոր 4.4.10 պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 5-ից:

Հավելված N 5

օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ)
ընդերքօգտագործման թափոնների վերամշակման

-----թ. N

ընդերքօգտագործման պայմանագրի

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՈՎ ԵՎ
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

1. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և
ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով
նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար
անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների չափը

NN
ը/կ
1.
2.
3.
4.

Միջոցառման
անվանումը

Կատարման ժամկետը Ներդրում

